Project funded by EUROPEAN UNION

WETOUR

Black Sea CROSS BORDER COOPERATION

**Հուլիս, 2023**

**Մամլո հաղորդագրություն 4**

# WETOUR - Սևծովյան կանանց ձեռներեցության կապ. կանանց հզորացում զբոսաշրջության միջոցով

*WE TOUR նախագիծը պետք է ավարտվի 2023 թվականի հուլիսի վերջին*

Սևծովյան կանանց ձեռներեցության կապ. կանանց հզորացում զբոսաշրջության միջոցով (WETOUR – BSB1030) ծրագիրն հաստատվել է ֆինանսավորման համար «ՍԵՎ ԾՈՎԻ ավազանի 2014-2020» համատեղ գործառնական ծրագրի շրջանակներում, և Ծրագիրը մեկնարկել է 2021 թվականի հուլիսին: 2 տարվա քրտնաջան աշխատանքից և ծրագրի նպատակներին մեծ ուրախությամբ հասնելուց հետո WE TOUR գործընկերները հպարտությամբ հայտնում են, որ WE TOUR նախագիծը վերջնական տեսքի է բերվելու 2023 թվականի հուլիսի 25-ին:

WETOUR նախագիծը նպատակ ուներ ստեղծել անդրսահմանային բիզնես ցանց Սև ծովի ավազանի տարածքում՝ ամրապնդելով, աջակցելով և զարգացնելով կանանց ձեռներեցությունը զբոսաշրջության միջոցով և կանանց տրամադրելով տնտեսական և սոցիալական նոր հնարավորություններ:

Ծրագիրը ներառում է 5 գործընկեր 5 տարբեր երկրներից՝ 4 գործարար կանանց ասոցիացիա Հունաստանից, Բուլղարիայից, Վրաստանից և Թուրքիայից և 1 զբոսաշրջային ասոցիացիա Հայաստանից: Յուրաքանչյուր գործընկեր ունի տարբեր դերեր բիզնես ոլորտում և կատարել է տարբեր պարտականություններ ծրագրի իրականացման ընթացքում: Ծրագրի գործընկերները միավորեցին ջանքերը՝ զբոսաշրջության նորարարական ձեռնարկատիրական շրջանակի զարգացման և Սևծովյան մակրոշրջանի՝ որպես գրավիչ զբոսաշրջային վայրի առաջմղման համար:

WE TOUR նախագիծը նպատակաուղղված էր կանանց ձեռներեցության խթանմանը Սև ծովի ավազանի տարածքում ցանցի համար ամուր գործընկերության միջոցով: Ծրագրի գործընկերները Հունաստանից, Բուլղարիայից, Վրաստանից, Թուրքիայից և Հայաստանից ստեղծել են ձեռնարկատիրական շրջանակ զբոսաշրջության զարգացման և Սևծովյան մակրոշրջանի՝ որպես գրավիչ զբոսաշրջային վայրի առաջմղման համար: Ծրագրի իրականացման 2 տարվա ընթացքում յուրաքանչյուր գործընկեր կատարել է տարբեր դերեր և պարտականություններ:

Ծրագրի գործընկերները հավաքվել էին առաջին ֆիզիկական հանդիպման համար՝ WETOUR նախագծի երկօրյա մեկնարկային հանդիպման համար, 2021 թվականի նոյեմբերի 22-ից 23-ը, Սալոնիկում՝ Հունաստան: Ծրագրի գործողություններն արագացան առաջին ֆիզիկական հանդիպումից հետո: Ծրագրի ընթացքում յուրաքանչյուր գործընկեր նպաստել է WE TOUR նախագծի համար վերապատրաստման մոդուլների մշակմանը, տեղական թրեյնինգներ են անցկացրել իրենց երկրներում, տեղական և միջազգային գործողություններ են անցկացրել նախագծերի առաջմղման, ինչպես նաև նախագծերի կառավարման համար, կապ է պահպանել շահագրգիռ կողմեր լայն ցանցի հետ և ներգրավվել են կանայք, ովքեր զբաղվում են զբոսաշրջային բիզնեսով և կանայք, ովքեր ցանկանում են լինել զբոսաշրջության ոլորտում:

WE TOUR նախագիծն ունի իր սեփական կայքը և «WE TOUR Portal»-ը որպես առանձին կայք: «WE TOUR Project» Instagram-ի, Facebook-ի և LinkedIn-ի էջերը ներկայումս ակտիվ են և հասանելի կլինեն ծրագրի ավարտից հետո՝ ծրագրի արդյունքների կայունության և հասանելիության համար:

Ծրագրի ավարտը նշվել է երկու հիմնական իրադարձություններով. Միջազգային WeTour Համաժողով, որը կազմակերպել է Հունաստանի կին ձեռներեցների ասոցիացիան – SEGE, 2023 թվականի հունիսի 21-22, Սալոնիկի Grand Hotel Palace-ում և գործընկերների «Վերջնական հանդիպում», տեղի է ունեցել առցանց 2023 թվականի հուլիսի 24-ին:

2023 թվականի հունիսի 21-ից 22-ը Սալոնիկում տեղի ունեցած միջազգային համաժողովի ժամանակ՝ ավելի քան 200 հոգու մասնակցությամբ վեց տարբեր երկրներից ժամանած մասնակիցներն ու արժանավոր հյուրերը, ներկաները

հնարավորություն ունեցան քննարկելու զբոսաշրջության ոլորտում կին ձեռներեցներին հզորացնելու ուղիները: Նրանք լսեցին կին ձեռներեցների փորձը, ովքեր աջակցություն ստացան ծրագրի շրջանակում և մասնակցեցին հանդիպումներին՝ խթանելու իրենց բիզնեսների աճը և ցանցային կապը:

Համաժողովի առաջին օրը սկսվեց Հունաստանի Կին ձեռներեցների ասոցիացիայի (SEGE) նախագահ տիկին Լինա Ցալթամպասինելոյթով, ով, ողջունեց և շնորհակալություն հայտնեց մասնակիցներին իրենց զգալի մասնակցության համար: Այնուհետև ողջույններ հղեցին Կենտրոնական Մակեդոնիայի զբոսաշրջության գծով տարածաշրջանային փոխնահանգապետ տիկին Քրիստինա Գուլան և Թուրքիայի կին ձեռներեցների ասոցիացիայի՝ KAGIDER, նորընտիր նախագահ, տիկին Էսրա Բեզիրջիողլուն: Միջազգային երկօրյա համաժողովն ամփոփվեց մամուլի ասուլիսով WE TOUR - & Black Sea Women Entrepreneurship Connection - Կանանց հզորացում. եվրոպական նախագծի վերաբերյալ:

WE TOUR նախագծով, որի նպատակն է միջսահմանային համագործակցությունը, ստեղծվել է կոնկրետ ծրագիր, որը շատ կարևոր է կանանց ձեռներեցության զարգացման համար, հատկապես զբոսաշրջության ոլորտում, կանայք վերապատրաստվել և տեղեկացվել են տեղական դասընթացների, տեղական միջոցառումների և ծրագրի շրջանակներում տեղի ունեցած հանդիպումների միջոցով: Մեծ հետաքրքրություն և ոգևորություն արձանագրվեց յուրաքանչյուր գործընկեր ասոցիացիայի կողմից դասընթացներն անցկացնելուց հետո, և որոշ մասնակիցներ խնդրեցին նման գործունեության հետագա շարունակականությունն ապահովել: WE TOUR նախագիծը ստեղծել է իրազեկում, կանանց միջև գիտելիքների փոխանակման հնարավորություններ և նեթվորքինգ, և ծրագրի դրական ազդեցությունները կշարունակեն ընդլայնվել, քանի որ առցանց հարթակները հասանելի կլինեն՝ նույն դասընթացները առցանց ստանալու համար, ինչպես նաև զբոսաշրջության և համապատասխան տեղեկատվության թարմացման համար: WE TOUR գործընկերները կշարունակեն իրենց երկխոսությունը՝ աջակցելու կին ձեռներեցներին և կշարունակեն կիսել իրենց լավագույն փորձը համայնքի հետ:

Սևծովյան ավազանի 2014-2020 թթ. համատեղ գործառնական ծրագիր
SEGE - Հունաստանի կին ձեռներեցների ասոցիացիա
Հուլիս, 2021

«Սևծովյան ավազանի 2014-2020թթ.» համատեղ գործառնական ծրագիրը համաֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից Եվրոպական հարևանության գործիքի միջոցով և մասնակից երկրների՝ Հայաստանի, Բուլղարիայի, Վրաստանի, Հունաստանի, Մոլդովայի Հանրապետության, Ռումինիայի, Թուրքիայի և Ուկրաինայի կողմից:

Այս հրատարակությունը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Դրա բովանդակության համար պատասխանատվությունը կրում է բացառապես WETOUR նախագիծը և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

**ՎԵՐՋ**